ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.07.2015թ.
254-ի 5

ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն Էդվարդ Նալբանդյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Նալբանդյան,

Մեզ է դիմել Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլ քաղաքում բնակվող ՀՀ քաղաքացի եւ խնդրել է իրեն օգնել տեղեկություն ստանալու հարցում: Քաղաքացու երեխայի անձնագրի ժամկետը լրանում է, իսկ նորը տրամադրելու համար ՌԴ-ում ՀՀ հյուպատոսը պահանջել է 14650 ռուբլի վճար:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ արժե ՌԴ-ում 18 տարին չլրացած ՀՀ քաղաքացու անձնագիրը փոխելը,
2. Ի՞նչ արժե ՌԴ-ում 18 տարին լրացած ՀՀ քաղաքացու անձնագիրը փոխելը կամ վավերականության ժամկետը երկարաձգելը,
3. Արդյոք նախատեսվա՞ծ է ՌԴ-ում ՀՀ հյուպատոսի այց ՌԴ տարբեր շրջաններ՝ վերոնշյալ կամ այլ հյուպատոսական ծառայություններ մատուցելու համար,
4. Եթե այո, ապա հյուպատոսի այցի դեպքում գանձվու՞մ է արդյոք հավելյալ վճար անձնագիր փոխելու կամ ժամկետը երկարաձգելու համար, եթե այո, ապա որքա՞ն:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան